ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019թ. հոկտեմբերի 2-ից 4-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՌԴ էներգետիկայի նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցելու «Ռուսաստանյան էներգետիկ շաբաթ» միջազգային համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել են էներգետիկայի բնագավառի մարտահրավերները, զարգացման արդիական խնդիրները:
   Պանելային քննարկումներ են կայացել էլեկտրաէներգետիկայի, գազի, նավթ նավթամթերքի, ատոմային էներգետիկայի, էներգախնայողության և էներգարդյունավետության թեմաներով:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Ռուսաստանյան էներգետիկ շաբաթի շրջանակներում մասնակցել եմ ՌԴ նախագահ Վ.Պուտինի հետ հատուկ հանդիպմանը: Նշվել է համաժողովի կարևորությունը՝ համաշխարհային էներգետիկ խնդիրները և զարգացման ուղիները քննարկելու նպատակով:
   Հանդիպում եմ ունեցել ՌԴ Ռոսատոմ պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ա. Լիխաչովի հետ: Քննարկվել է ՀԱԷԿ շահագործման ժամկետի երկարացման աշխատանքների հետ կապված ընթացիկ հարցեր:
   Հանդիպում եմ ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության նավթի նախարար Բ. Զանգանեի հետ: Քննարկվել են գազի և էլեկտրաէներգիայի բնագավառներում Իրանի հետ համատեղ ծրագրերի ընթացքը: Մասնավորապես գազ էլեկտրաէնեգիայի դիմաց ծրագրով ծավալների մեծացման հետ կապված հարցեր: Քննարկվել են Իրանի հետ գազի և նավթամթերքների բնագավառում

փոխգործակցությունը ընդլայնելու հարցեր: Երկուստեք պատրաստակամություն է հայտնվել նշված բնագավառներում երկկողմ համագործակցության խորացման նպատակով: Քննարկված հարցերի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները կդետալացվեն առաջիկայում Իրան կատարելիք իմ այցի ընթացքում:

Հանդիպել եմ ՌԴ էներգետիկայի նախարար Ա.Նովակի հետ: Քննարկվել են էներգետիկայի բնագավառում երկկողմ և բազմակողմ համագործակցության հարցեր: Մասնավորապես՝ կարևորվել է Հյուսիս-Հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք ծրագիրը (Հայաստան-Իրան-Վրաստան-Ռուսաստան) և դրա իրականացման նպատակով անհրաժեշտ աշխատանքների ընթացքը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ներգրավելով նախաձեռնությանը մասնակից մյուս գործընկերներին արագացնել մասնագիտական մակարդակում քննարկումները Հյուսիս-Հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք ծրագրով տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման ու տեխնիկական այլ լուծումները վերջնականացնելու նպատակով: Քննարկվել է նաև ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման հետ կապված ընթացիկ հարցեր:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի և ՌԴ էներգետիկայի նախարարի կողմից 2019թ.հոկտեմբերի 4-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության և միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ» 2013 թվականի դեկտեմբերի 2-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել համագործակցությունը բոլոր ուղղություններով ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման նպատակով:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար Ս.Պապիկյան

08.10.2019թ.